

1891

# ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ ՅՈՒՆՈՒՄ

## ՀԱՅԿԱԿԱՆ Ք

ՀԱՅ-ՎԵՆԵՏ

(Տես Հատոր Խթ. յէջ 369)



Եթ ինչուան հիմա առաջ բերած վաւերական յիշատակագիրներէն յայտնի եղաւ, թէ վենետիկյ Հասարակապետութիւնն Հայոց աշխարհին մէջ իրեն յարակայ ներկայացուցիչն ունէր ըզդայլն, ոչ այն ան իրուու քաղաքական գործող մը ընդ հայկական պետութեան, — որովհետեւ այս վախճանաւ սովոր էր յատուկ դեսպաններ դրկել, — որքան իր հպատակացը վաճառականա, կան գործոց համար. ուստի և Պայլն կը նստէր յԱյս, որ կեդրոն մէր Հայոց տէրութեան վաճառականութեան ու համաշխարհական նաւահանգիստ, Ըսինք թէ Պայլն իր խորհրդականներն ունէր, և թէ ամէն կարեոր գործ՝ անոնցմէ երեքին երկու մասին հաւանութեամբ կը սահմանուէր. Ասոնց հետ կային նաև ուրիշ պաշտօնեայք, ինչպէս թարապանիք (placiarii), վաձառատեսուչյք (merciarii), և պահապանք կալուածոց, որպիսիք էին հասարակապետութեան ծունն, Փնդուէր, վարձաբեր շինուածք, եկեղեցի, և այլն. Այլ վաճառականաց բազմապատիկ և բազմազգի կարեոր գործոց համար՝ յառետուրս, ի գաշնադրութիւնս, ի փոխառութիւնս,

ի կտակս, անհրաժեշտ պէտք կար նաև ուրիշ պաշտօնէի մ'ալ. և էր Նօտարն, անանջրպետ անձ մը ամէն զլիսաւոր պաշտօնակալի քով՝ որպիսի ոք էր Պայլն. և ինչպէս ի բուն Հայրենիսն՝ նաև յայլ աշխարհս, նոյն ժամանակաց սուորութեանց և օրինաց համեմատ՝ եւ կեղեցականք էին նօտարքն, իբրու հաւատարմագոյն անձինք, և յաճախ նաև թաղպետք իսկ եկեղեցեաց: Վենետիք ալ Սրբոյն Մարկոսի նուիրուած եկեղեցի մը ունէին յԱյաս. բայց հաւասարիք մը չկայ թէ անոր ժողովրդապետն նօտար ալ եղած ըլլայ. և հաւանելի ալ չերենար. այն քիչ թուով յիշուած նօտարքն ալ յԱյաս՝ Վենետիկոյ եկեղեցեաց անուամբ կը կոչուին. ինչպէս Ս. Ռափայէլ եկեղեցւոյ քահանայն ֆրանկիսկոս Ուրսոյ (1303) ու Պետրոս (1314-5) թաղպետ Ս. Եւգիմեայ. – կը յիշուի և Յովհաննէս Փէլլէկրինի քահանայ՝ նօտար, առաջին գրող կտակի յԱյաս մեռնող անձի մը. բայց որոշ չէ թէ արդեօք հօն գրուած է կտակն թէ ի Վենետիկ: Իբրև վկայ նօտարի կը յիշուի Մարկոս քահանայ Զիոյ՝ Ս. Երմագոռայ եկեղեցւոյ (1316), Պողոս քահանայ եկեղեցւոյ Ս. Յակովրայ Տէլուփրիոյ (de l'Orio, 1327): – Ուրեք կը յիշուի և Պայլին մատրանապետ՝ Նիկողայոս քահանայ Ս. Եւստաթեայ (1331): Այս յիշատակուածներէն՝ միայն Պետրոս քահանայի ձեռքով յօրինուած ու կնքուած հինգ կտակք ծանօթ են՝ գրեալք յԱյաս, յամս 1314-5. ուրիշ նօտարի մ'ալ որոյ անուն չի յիշուիր ի գործմն, այլ Վենետիկոյ գիւանաց մէջ կը գտնուի ընդ գրուածս Յովհաննու Գամբրիոյ նօտարի, և են Երեսունչորս թուով յօրինեալք ի միջոցի լոկ ութ ամսոց, ի կիսոյ օգոստոսի (1316) ցմարտ հետեւալ տարւոյն. զոյզն՝ մանաւանդ թէ ամենագոյզն նշխար մը յոգնաթիւ ու անհամար գործոց արձանագրելոց՝ գէթ յութսուն ամս բարգաւաճանաց Ս. յասոյ և յաճախելոյ Վենետիաց ի Հայս, յորոց ոմանք ոչ միայն ի շահաստան յայնմ քաղաքի կը բնակէին, այլ նաև յայլ քաղաքս աշխարհին, որպէս ի մայրաքաղաքն Սիս, յԱտանա, և այլն. որոց և քաղաքացի (borghesi) ալ գրուած կամ եղած են, ինչպէս կ'իմանամք ի նօտարական յիշեալ գրուածոց, և յորոց գիւրին է գուշակել թէ որպիսի անակնունելի լոյս պիտի ծագեն Ս. յասոյ նօտարագրութիւնք՝ Վենետիաց ընտանեկան պատմութեան և աղգարանութեան, թողվաճառականական գիտելիքն: Ազնուական տապետն Տէ-Սիմոնի՝ հըմուտ հետամուտ Հայրենական և արենելեան յիշատակաց՝ հրատարակեց ի պատուական գիրս Արևելեան Լատին դիցանաց (Archives de l'Orient-Latin) իբր 180 գործս արձանագրեալս յԱյաս գենուացի նօտարաց ձեռքով, գրեթէ ասսնուհինք տարուան (1274-1279) միջոցին մէջ, և որ իբենց ազգայնոց կը վերաբերէին. և որովհետեւ Վենետիկ անոնցմէ աւելի երկար ատեն և բազմաթիւ բնակեցան և երթեւեկեցին ի Հայս, հաղարաւոր թուով պէտք էր որ եղած ըլլային

նաև նօտարական գործք, որոյ եթէ ոչ բովանդակն՝ այլ մեծ մասն յուսալի է վենետիկոյ անսպառ գիւաններէն։ Ասոնցմէ առաջ բերենք միայն՝ ինչուան հիմայ հրատարակուածներէն կամ մեր առանձին քննութեամբ ի գիւանս ծանօթ եղածներն, նկատմամբ այն ժամանակին որոյ վերայ է մեր խօսքը. վասն զի վերջին ժԶ-ժԸ դարուց նօտարական և պաշտօնական հայկական գրուածք ի վենետիկ՝ հազարաւորք են ծանօթքն, թէպէտ գեռ հրատարակուած չեն։

Այս քաղաքին մէջ վախճանելոց կտակաց մին է՝ Յովհաննու Ռուծինի († Հոկտ. 1315) մականուանելոյ Թաթարոյ (Tataro)։ Այս անուամբ ծանօթ է Միքայէլ ոմն՝ որ ի վերջ երեքտասաներորդ դարու Հայոց Սմբատ թագաւորին դիպակ վաճառած էր, ինչպէս նաև ուրիշ շահավաճառի գործերով։ Ռուծինի իր ստացուածքը կը կտակէ որդւոյն, և կտակակատար կը սահմանէ Վլաս Մալիբիէրի և Բենեդիկտոս Ճիրարտոյ ազնուատոհմ անձինքը. կը փափաքի թաղուիլ Այասոյ Ս. Մարկոս եկեղեցւոյն մէջ, և կը յանձնէ նոյն քաղաքին նաւահանգստին մէջ գտնուած իրնաւը և ինչքը ժողվել անոնց տիրութիւն ընելով։ կը գտնուին դարձեալ ի դիւանս վենետիկոյ վաւերագրեալ կտակք Անդրէի Նանի († նոյեմբ. 1315), որ նոյնպէս թաղուցաւ ի Ս. Մարկոս Այասոյ. – Եասոմինայ այրւոյ Դանիելի Միքէլի (25 յուլիս 1316), որ բաց յայլ և այլ բարերարական հրետակաց՝ կը թողու քսան դահեկան Ս. Փրկիչ եկեղեցւոյ յԱյաս, ուր կը բնակի, կ'բաէ, հայ քահանայն Միքայէլ, (ubi habitat presbyter Michael Armenus). – Միքայէլի Սիենացւոյ և Սիմոնի Հռամացւոյ (25 նոյեմբ. 1315) որ թերեւս ասորի էր ազգաւ, իսկ բնակութեամբ հաստատուած յԱյաս։

Ասոնցմէ զատ՝ բազմաթիւ և հետաքննականք են, մանաւանդ վենետաց համար՝ նօտարական գործք զայլ և այլ խնդրոց, վճռոց, դաշնագրոց, զորս աւելորդ կը համարինք առ այժմ մէջ բերել, չունենալով մեր նիւթին հետ անմիջական վերաբերութիւն մը։ Ցիշենք միայն 1327 նոյեմբեր 15 թուականաւ դրուած դաշնագիր մը, որով հայանունն չեթում (Aytonus de Oria) նաւապետ գենուացի՝ վեց խալէից և անոնց մէջ գտնուող ութ նաւուց. և Պալտոյ Սփինոլայ գենուաց զունցն երաշխաւոր կըլլայ էրիցցոյ պայլի վենետաց։

Այս վերջին յիշատակ, կամաւ թէ ակամայ՝ կ'արթնցընէ ի յուշ խտալաց, մանաւանդ վենետաց և գենուացւոց, այն նախանձընդդէմ մրցանքն և արիւնահեղ մարտք պատերազմաց, որ ի ջուրս ծովուց դրդուեցան այս երկու ժողովրդոց մէջ, և յորոց՝ յայլ և այլ ժամանակս և ի դէպս՝ բոլորովին անմասն շեղաւ նաև Այասոյ գոգն. որով կարասեաց և ազգերու շահուց այն շտեմարանն լայն և թոյլ գերեզման եղաւ շահախնդիր զինելոց. որք երբեմն իրենց ասպնջական բաւեկամաց և բարերարաց Հայոց դէմ ալ՝ հինաբար վերուցին ի-

րենց ձեռքի ուղղակի թէպէտ և փութալով ի ստրջանս և ջանալով միւսանգամ անոնց շնորհաց արժանաւոր ըլլալ։ Այսպէս 1267 թը-ւին՝ Գենուաց նաւատորմիզն առաջնորդութեամբ Լուքէթթոյ կրիմալ-տոյի՝ աւարելով կողոպտեցին ի կոռիկոս, որ Հայոց ամրագոյն նաւա-հանգիստն էր և յետ Այասոյ երկրորդ շահաստան, վաճառաբարձ նաւ մը, որոյ վրայ շատ վաճառականք՝ նաև ի Հայոց, բեռցուցեր էին իրենց ապրանքը, և յետոյ ստիպուեցան (1271) անոնց եղած վնասը դարմանել, հատուցանելով իբր 22800 բիզանդ սառակին-հայ, ինչ-պէս կը ցուցընէ Գենուայի դիւնաց մէջ գտնուած նօտարական մուրհակ մը։ Բայց ամենէն աւելի հոչակաւոր և վենետաց համար աղիտագոյնն եղաւ Այասոյ ջուրց մէջ տրուած նաւամարտը, յամի 1293, զոր այսպէս կը համառօտէ տարէդիրն Հեթում պատմիչ։ «Խալէքն ճնվիզացն կռվեցան յԱյաս, ընդ երեսունուերկու խալէ և ընդ դարեթի վենեցիանացն, և շահեցան Ճնվէզքն քսաննեչորս խա-լէ», առաջնորդութեամբ Սրբնորայ Նիկողայոսի։ Ինչպէս ծանօթ է, Լիկուրիացւոց այս յաղթանակն, նոյն իսկ յԱյաս՝ իրենց ձախո-ղութենէն գրեթէ անմիջապէս ետքը. վասն զի սկսան մէկէն յար-ձակիլ հինաբար վաճառաբարձ նաւուց վրայ, ուղ վերը յիշուած կո-ռիսոսի դիմաց կողոպտեցին հարուստ նաւ մը մարսիլիացի վաճա-ռականաց. ուրիշ նաւու մը վրայ ալ յարձակեցան խալէք՝ Պոծիլի Մարկոսի առաջնորդութեամբ։ Այս անիրաւութեան դէմ բողքեցին զրկուող մարսիլիացի վաճառականք, և ամենէն աւելի Պետրոս Քադրըլէնկ ոմն (1295 մայիս), որ նաւով յԱյասոյ պիտի եր-թար ի Ռումանիա. և կ'ըսէր թէ 700 տուրովնեան ուկույ վնաս կը-րած ըլլայ. խօսքին ստուգութեանը վկայեցին նաև բիզացի վաճա-ռականք յատենի իրենց Յովհաննէս Պորտի գունցին (1296, սեպտ. 2). Այս դիպաց կ'ակնարկէ անշուշտ վենետիկոյ հասարակապետու-թեան վճիռ մը, տուեալ ի 22 ապրիլի 1295.

Ասոնց և Մարսիլիացւոց մէջ յուզուած խնդիրն և վէճ երկար տա-րիներ քշեց (1302). վասն զի Վենետիք ալ իրենց պահանջքն ունէին ի Մարսիլիացւոց, ինչպէս կը գրէր (1303, նոյեմբ. 48) Մարկոս ոմն Սիպոդ՝ առ զուքն իւրեանց՝ այս խնդրոց և պահանջից համար։ Դուքսն արդէն երկու տարի յառաջ (1300) կանխեր գրեր էր խոս-տանալով զլսաւոր զրկելոյն՝ թովմայի թիգարտոյ կրած վնասը հա-տուցանել։ Երբ այս խնդիրը կը յուզէին, Վենետիք և գենուացիք՝ երկու ժողովուրդք ծովատեարք՝ չէին դադրեր ի խոռվելոյ զալիս, և անոնցմէ աւելի՝ խաղաղասէր վաճառականք. Վենետիք ջրէն ի յա-մաք յարձրէկելոյ՝ կարծեցին յաջողագոյն հարուածով տկարացընել իրենց հակառակորդը, քանդելով ցրուելով անոնց սեղանաւորաց ու վաճառականաց յԱյաս քաղաքի ունեցած տրապիզքը (1297), ա-

ուաջնորդութեամբ Մորոզինոյ Թէոփիլեայ : Նոյն ատեն և գենուացիք ալ՝ ինչ որ չեին կարող գործել յԱյաս , ի սահմանս կիպրացւոց՝ անոնց դաշնակցաց կը գործէին յելուզակարար . այն պատճառառաւ Միքայէլ թաթարոյ կը բողոքէ առ թագաւոր նոցա (1298) : Քանի մը տարի ետք կը յաջողէին ֆէրսիվալ զօրավար առաջնորդին ձեռքով Այասայ մօտ , ի կաւոյ կորբասոյ , զերել վենետիկեան խալէ մը . և որովհետև այն միջոցին իրարու հետ հաշտուած կը համարուէին երկու հասարակապետութիւնք , Վենետաց ի կիպրոս նստող Պայլն բողոքեց առ երեսփոխան գենուաց որ ի կղզւո՞ն . և տեսնելով որ փոյթը չէ և արժէք մը չուզեր տալ իր բողոքին , զրեց առ դուքսն , ծանուցանելով եղածը (1303 , մարտ ) :

Նոյն ժամանակներն ալ աւելի կարևորագոյն խնդիր մը ծագեցաւ ոչ լոկ օտարաց՝ այլ և Հայոց ընդ վենետու : Ստուգիւ չենք կրնար ըստել թէ ինչ պատճառառ վենետաց երկու խալէք՝ նաւապետելով Անդրէի Սանմւտոյ և Պաւլոսի Մորոզինոյ , յարձակեցան Այասայ ցամաքային բերդին վրայ , ու արքունականաց հետ կողոպտեցին նաև առանձնականաց ինչքը , զՀայոց և զօտարաց , ընդ որս և զգունցին Բիզացւոց : Անոր բողոքանաց վրայ առ թագաւորն Հայոց , Փէրմարինոյ Յովհաննէս Պայլն փութաց ի ստիպելոյ արքային և լիկոս և կալոժեն նաւապետաց Այասայ՝ հատուցանել առ թորոս զուքս ( փոխանորդ ) Գունդստապլին , ի փոխարէն վնասուց գունցին՝ 1244 զրամ նոր Հայկական :

Բնականաբար այս հատուցմամբ քաջալերուած ուրիշ զրկեալք ալ իրենց բողոքոյ ձայնը բարձրացուցին , իւրաքանչիւր ոք նշանակելով իր վնասը , և արքունի ատենին ձեռքով արդարութիւն և իրաւունք պահանջելով : Ատեանն ալ աւելցուց արքունական վնասը՝ զինուց և կազմածոց ի բերդին , և ներկայացընելով (1309) առ Պայլն և առ խորհրդականս նորա , հատուցումը ընդունեցաւ , ինչպէս մանրամասն կը նշանակուի<sup>1</sup> , երեսուն հազարէն աւելի գումար մը նոր զըրամոց . ուստի և Աւագ Պարոնն , որ թուի թէ ինքն Հեթում թագաւորահայրն էր , ( որովհետև ստորագրութիւն չկայ , այլ միայն ի փոանկ լեզու Nous le gran Seignor ), իր և թագաւորին կողմէն անդորրագիր տուաւ<sup>2</sup> :

Երբ աստ վենետաց պարտքերը կը վճարուէին , յարեմուտս իրենց մայրաքաղաքին մէջ Պետրոս Քաթըրլէնկ զրկուած մարսիլիացի վաճառականաց պահանջից հատուցման խնդիրը կը յարուցանէր . և ուզած ու ենթադրած իրաւանց չհանդիպելով , շատ տարի անցնե-

1. Langlois, Cartulaire, j'էջ 170.

2. Ամդ յ'էջ 169.

լէն ետքը ( 1332 , մայիս 12 ) նորէն խնդիրը ներկայացուց , ուզելով  
առանց դատի՝ յատենի դքսին աւարտել գործը : Պետութեան յանձն  
արարութեամբ .քննութեան առաւ զայն մնդիկոսն Պենգա ( 1327 ,  
յունիս ), ու անընդունելի և մերժելի ցըցուց զինդիրն , մանաւանդ այն  
պատճառաւ որ յառաջնումնուագին Մարսիկացւոց իրաւունքը պա-  
հանջած ատեն , իրենին խօսքը չէր ըրած : Սակայն ասով ալ բողզքո-  
ղը չդադրեցաւ . ու գրեթէ վրան տասն տարի անցնելէն ետքը ( 1331-2 )  
կրկին յուզուած է այս յամառեալ խնդիրը , և վերջապէս աւար-  
տած , անդորրագիր տալով թումայինոյ ֆոնդանոյ փիաչենցացւոյ և  
իրեն հետ նաև Քաթրըլէնկի , յետ գրեթէ քառասուն տարւոյ ի  
ծագմանէ խնդրոյն : Այն ժամանակաց մէջ ալ երբեմն այսպէս կը  
յերկարածգէին դատք և իրաւունք . և բարեբազդք համարելու են  
որք Պետրոսի նման յերկարակեացք՝ յաջողին հասանելիրենց խըն-  
դրոյն , և արդարութիւնը կատարուած տեսնել :

Սոյն 1332 տարւոյն մէջ հանդիպած է դարձեալ յամառ հակա-  
ռակութեան դէպք մը գենուաց ընդ վենետաց ի ջուրս Այասայ ,  
յարձակմամբ առաջնոցն նաւու մը վրայ որ այն նաւահանգստէն կ'եր-  
թար ի կիպրոս :

Զարմանալի և հակառակընդդէմ զուգադիպութեամբ՝ այն միջոցին  
ու օրերուն՝ յատեանս վենետաց ալ խնդիր կ'ըլլար իրենց պահան-  
ջանաց համար և հարստահարութեանց , զոր ի Հայոց կը կրէին կամ  
կրել կը կարծէին , և զոր ըստ ժամանակին և կարգի պիտի ջանանք  
հետազոտել : Դառնանք հիմայ այս երկու ազգաց իրարու հետ ունե-  
ցած յարաբերութեանց , ուր թողուցինք ի սկզբան բանիցս . մէջ բե-  
րելով մեր թագաւորաց առաջին դաշնագիրերը զոր կնքեցին վենետ-  
կոյ դըքսերուն հետ , անոնց ազատ կամ զրեթէ ազատ վաճառակա-  
նութեան յամենայն սահմանս երկրին Հայոց . ուր՝ ինչպէս քիչ յա-  
ռաջ յիշատակուած նօտարական գրուածներէն ալ տեսանք , ոչ  
սակաւ վենետք չէ թէ միայն վաճառականութեան , այլ նաև բնա-  
կութեան տուներ հաստատած էին , և շատերն նաև քաղաքացին  
գրուած Սսոյ , Ատանայ , Այասոյ , և հօն մեռած և թաղուած ի Ա .  
Մարկոս Այասոյ կամ յայլ քաղաքս , և իրենց ժառանգները թո-  
ղած . կային ուրիշներ ալ՝ որ կը պարապէին յարուեստս , ի հիւսուած  
և յոստայնանկութիւն ցիսեաց և դիպակաց , ի հիւսնութիւն , ի դար-  
բնութիւն , ի վաճառ գինւոյ և այլոց պարենից , և այլն :

Շարունակելի